ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. հոկտեմբերի 12-ից 18-ը Լաս Վեգասում կայացած «Նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները» («Nuclear Security Measures and Emergency Response Arrangements for Ports») խորագրով միջազգային համաժողովին մասնակցության նպատակով իրականացված գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Զենֆիրա Աթոյան, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության դասակարգման և մաքսասակագնային հարցերով մասնագիտական կենտրոն-բաժնի ավագ մաքսային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք.Լաս Վեգաս, 2024թ. հոկտեմբերի 12-ից 18-ը:

3. Հրավիրող կողմը՝

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (IAEA):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից համակարգվող Միջուկային անվտանգության միջոցառումները և «նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները» («Nuclear Security Measures and Emergency Response Arrangements for Ports») խորագրով միջազգային համաժողովին:

Համաժողովի նպատակն էր նպաստել անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակմանը, ինչը հնարավորություն կտա հետագայում մշակել կամ վերանայել միջուկային անվտանգության միջոցառումները կամ նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները, ստեղծել հնարավորություն ծանոթանալու այլ անդամ երկրներում փորձին:

Հանդիպմանը ներկա էին Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը անդամակցող գրեթե բոլոր երկրներից ներկայացուցիչներ:

5. Քննարկված թեմաները՝

Լաս Վեգասում կայացած «Նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները» («Nuclear Security Measures and Emergency Response Arrangements for Ports») խորագրով միջազգային համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ապահովման և դրանց արձագանքման նպատակների ուսումնասիրում,

2) Ակնարկ միջուկային անվտանգության սպառնալիքների վերաբերյալ,

3) Միջուկային անվտանգության պլանավորում և գործողություններ,

4) Նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման գործողությունների պլանավորման օրինակներ,

5) Ճառագայթային հանցագործությունների վերաբերյալ իրազեկության բարձրացում,

6) Ճառագայթման հայտնաբերման սարքավորումների ինտերակտիվ ցուցադրում,

7) Հանդիպման երկու օրերը ունեցել են ինտերակտիվ դաշտային պարապմունքների բնույթ, իրականացվել են թիմային աշխատանքներ:

8) Ծանոթացում ԱԷՄԳ արձագանքման և աջակցության ցանցին,

9) ԱԷՄԳ-ի հետ հաղորդակցություն միջադեպերի և արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

Արդյունքում, հաշվի առնելով մեր մասնակցության ակտիվությունը, դասընթացների ավարտին ստացել ենք սերտիֆիկատներ:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Լաս Վեգասում կայացած «Նավահանգիստներում արտակարգ իրավիճակների արձագանքման մեխանիզմները» («Nuclear Security Measures and Emergency Response Arrangements for Ports») խորագրով միջազգային համաժողովին ելույթներ ունեցել է հիմնականում կազմակերպող կողմը, որոնք ունեցել են ուսումնական բնույթ: ՀՀ ՊԵԿ-ի կողմից հանդիպման ընթացքում ելույթ չի նախատեսվել:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Համաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից առաջարկություններ չեն արվել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Զենֆիրա Աթոյան

22.10.2024թ.